ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№4683-Ա « 04 » դեկտեմբերի 2024թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
04.12.2024թ.
հ. 4683-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Նելլի Շահբազյան /լիազորված անձ/ Անդրանիկ Ղևոնդյան	Էրեբունի այգետարածք, 100-րդ տեղամաս, հ.13	հողամաս	Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 14.11.2022թ. հ.11968 վկայագրով, Անդրանիկ Ղևոնդյանին փոխանցված ժառանգական գույքին՝ Էրեբունի այգետարածքի 100-րդ տեղամասի 500.0քմ մակերեսով հ.13 հողամասին /հիմք՝ 14.11.2022թ. հ.11967 նոտարական ակտ/ տրամադրել հասցե՝ Էրեբունի այգեգործական տարածք, 1-ին զանգված, հ.100/13	01053CDHCWS6	
2	Արամ Գասպարյան /լիազորված անձ/ Լյովա Գասպարյան	Տերյան փողոց, հ.59 շենք	նկուղային տարածք	Լյովա Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող, Տերյան փողոցի հ.59 շենքում գտնվող նկուղային տարածքին /սեփ. վկ. հ.1989004/ տրամադրել հասցե՝ Տերյան փողոց, հ.59 շենք, հ.33/1	0106355BWXMV	
3	Սամվել Սարգսյան	Վարդանանց փողոց, հ.5ա շենք, հ.224	բնակարան	Սամվել Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող, Վարդանանց փողոցի հ.5ա շենքի հ.224 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.26112024-01-0458, ընդ. բաժ.՝ 1.49քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 45.17քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Վարդանանց փողոց, հ.5ա շենք, բն.224/1	01063QDKURJA	
4	Գրիգոր Ասատրյան /լիազորված անձ/ Յուրիկ Ջանազյան	Մալաթիայի փողոց, հ.25	բնակելի տուն	Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 06.09.2024թ. հ.31951 վկայագրով, Յուրիկ Ջանազյանին փոխանցված ժառանգական գույքին՝ Մալաթիայի փողոցի հ.25 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Մալաթիայի փողոց, հ.25/1	01073FRDGUPW	

5	Հերմինե Կույումջյան	Նոր Արեշ 50-րդ փողոց, հ.32	հողամաս	Անշարժ գույքի մասի նվիրատվության 11.10.2024թ. հ.7569 պայմանագրով, Հերմինե Կույումջյանին նվիրած՝ Նոր Արեշ 50-րդ փողոցի հ.32 հասցեում գտնվող 151.5քմ մակերեսով հողամասին /շին. 75.8քմ/ տրամադրել հասցե՝ Նոր Արեշ 50-րդ փողոց, հ.32/2	01053X6DDJSD	
6	Տաթևիկ Հովհաննիսյան /լիազորված անձ/ Արտյոմ Սահակյան	Գ. Աղաբաբյան փողոց, հհ.13/24, 13/25, 13/26 և հ.15/18	հողամաս	Արտյոմ Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող, Գ. Աղաբաբյան փողոցի հհ.13/24, 13/25, 13/26 և հ.15/18 հասցեներում գտնվող հողամասերին /վկ. հհ.01072022-01-0365, 01072022-01-0361, 18082022-01-0212 և հ.09022023-01-0202/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Գ. Աղաբաբյան փողոց, հ.13/24	01043CY3BXR3	
7	Արեն Սիմոնյան /լիազորված անձ/ Լյուդմիլա Նիկիֆորովա /սեփականատեր/	Ղազար Փարպեցու փողոց, հ.28 շենք, հ.6ա	բնակարան	Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 01.11.2024թ. հ.18998 վկայագրով Լյուդմիլա Նիկիֆորովային փոխանցված, Ղազար Փարպեցու փողոցի հ.28 շենքի հ.6ա հասցեում գտնվող բնակարանին տրամադրել հասցե՝ Ղազար Փարպեցու փողոց, հ.28 շենք, բն.6/1	01063RVTBH34	
8	Համբարձում և Ռեբեկա Գևորգյաններ /լիազորված անձ/ Մայրամ Թութունջյան, Տաթևիկ և Հասմիկ Աթանեսյաններ	Վիլնյուսի փողոց, հ.71 շենք, հ.9ա	բնակարան	Վիլնյուսի փողոցի հ.71 շենքի հ.9ա հասցեում գտնվող բնակարանին /հիմք՝ վկ. հ.23072024-01-0196 և ըստ օրենքի ժառանգության իրավունքի 10.10.2024թ. հ.17584 վկայագիր/ տրամադրել հասցե՝ Վիլնյուսի փողոց, հ.71 շենք, բն.9/1	010838XAXSB3	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**